## Արձանագրություն 2

### ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.12.2018թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

**Ր. Ալեքսանյան** - ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի պետ - վարչության պետի տեղակալ

***Անդամներ***

**Գ. Քոչարյան** – ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

**Հ. Մելիքյան** – ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

***Գնումները համակարգող***

**Ա. Աղաբաբյան** - ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

**Ս. Մինասյան** - ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

**Մ. Համամճյան** - ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 8-րդ օրը ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին***

1" ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀ «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|

| | |
|---|---|
| «Գաուդեամուս» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 0257675, հասցե՝ ք. Երևան, Թումանյան փող., 42 շենք, 1-ին հարկ, էլ հասցե՝ armtranslation@gmail.com |
| «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02262902, էլ հասցե՝ yerevan.electro@gmail.com |
| Արամ Հովհաննիսյան | էլ հասցե՝ ahovhannisyan@amhaudit.am |
| Գնել Խաչատրյան | ՀՎՀՀ՝ 20171259, էլ հասցե՝ gnelkh@yahoo.com |
| «Գևորգ Սիմոնյան Ջիվանի» Ա/Ձ | ՀՎՀՀ՝ 75428606, հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60, էլ հասցե՝ mail@agtranslate.ru |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն,որ

1. Գնել Խաչատրյանի կողմից ներկայացված հայտում կցված չէ հրավերով պահանջվող հավելված 2.1-ը: Ինչպես նաև Գնել Խաչատրյանը, հանդիսանալով ֆիզիկական անձ, չի կարող ունենալ հարկ վճարողի հաշվառման համար:

2. Արամ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտում կցված չեն հրավերով պահանջվող հավելված 1-ը, հավելված 2-ը, հավելված 2.1-ը և հավելված 3-ը:

3. «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 2-ում մրցույթի ծածկագիրը սխալ է գրված: Ինչպես նաև փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում ընկերության տնօրենի ստորագրության հետ, առկա չէ փաստաթուղթ, որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի տվյալ ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստաթղթեր:

4. «Գաուդեամուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չէ հավելված 2-ը, հայտով ներկայացրած լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ինչպես նաև փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում ընկերության տնօրենի կամ լիազորված անձի ստորագրության հետ, առկա չէ փաստաթուղթ, որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի տվյալ ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստաթղթեր:

Մյուս մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

## 4. *Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը*

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում.

**Հանձնաժողովը որոշեց.**

1. Հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի և «Գաուդեամուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

## 5. *Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը*

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել սույն թվականի դեկտեմբերի 21-ին ժամը 17:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _______________ Ր. Ալեքսանյան

հանձնաժողովի անդամներ՝ _______________ Գ. Քոչարյան

_______________ Հ. Մելիքյան

Գնումները համակարգող՝ _______________ Ա. Աղաբաբյան

Հավելված 1

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Գաուդեամուս» ՍՊԸ | | | «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ | | | Արամ Հովհաննիսյան | | |
| | | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին |
| 1 | Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների թարգմանություն | 840 000 | | 840 000 | 3 750 000 | | 3 750 000 | 4 379 850 | | 4 379 850 |

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գնել Խաչատրյան | | | «Գևորգ Սիմոնյան Ջիվանի» Ա/Ձ | | |
| | | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին |
| 1 | Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների թարգմանություն | 3 250 000 | | 3 250 000 | 3 545 800 | | 3 545 800 |